Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2020 թվականի 05 մարտի N 22-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության և սույն կանոնադրություններով:

3. Նախարարը հաստատում և փոփոխում է Վարչության հաստիքացուցակը, որը ներկայացնում է Նախարարության գլխավոր քարտուղարը՝ համաձայնեցնելով Վարչության պետի հետ:

4. Վարչությունն իր գործառույթներն իրականացնում է Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, Նախարարության գրասենյակների և Նախարարությանը ենթակա մարմնի, կազմակերպությունների և հիմնարկների հետ համագործակցելով:

5. Վարչությունը Նախարարի, նրա տեղակալի և Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ իր իրավասությունների շրջանակներում համագործակցում է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, դրանց ստորաբաժանումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ:

6. Վարչությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է աշխատանքային ծրագրով: Վարչության աշխատանքային ծրագիրը յուրաքանչյուր տարի հաստատում է Նախարարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ սահմանված կարգով:

7. Վարչությունը կազմված է՝

1) Ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնից.

2) Ընտանիքի սոցիալական գնահատման բաժնից.

3) Ժողովրդագրական ծրագերի բաժնից:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Վարչության խնդիրներն են՝

1) սոցիալական աջակցության, այդ թվում սոցիալական երաշխիքների ոլորտի քաղաքականության մշակման, և օրենսդրության կատարելագործման ապահովումը.

2) ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի հիմնախնդիրներն ուսումնասիրելու (վերլուծելու) աշխատանքների իրականացման կազմակերպումն ու ապահովումը, այդ հիմնախնդիրների լուծելու ուղղությամբ առաջարկությունների մշակումը, ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի կատարելագործման համապատասխան պետական ծրագրերի մշակումը և այդ ծրագրերի իրականացման ապահովումը,

3) սոցիալական աշխատանքի ինստիտուտի կատարելագործման ապահովումը.

4) սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման քաղաքականության մշակումն ու իրականացումը.

5) ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական դեպքի վարման համակարգերի հիմնախնդիրներն ուսումնասիրելու (վերլուծելու) աշխատանքների իրականացման կազմակերպումն ու ապահովումը, այդ հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ առաջարկությունների մշակումը, ինչպես նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական դեպքի վարման համակարգերի կատարելագործման համապատասխան պետական ծրագրերի մշակումը և այդ ծրագրերի իրականացման ապահովումը,

6) ժողովրդագրական իրավիճակի հիմնախնդիրներն ուսումնասիրելու (վերլուծելու) աշխատանքների իրականացման կազմակերպումն ու ապահովումը, ժողովրդագրական հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ առաջարկությունների մշակումը, ինչպես նաև ծնելիությունը և բազմազավակությունը խթանելու պետական ծրագրերի մշակումը և այդ ծրագրերի իրականացման ապահովումը,

7) ընտանիքի, այդ թվում երեխա ունեցող և երիտասարդ ընտանիքների, բազմազավակ ընտանիքների սոցիալական պաշտպանությունը,

8) սոցիալական աջակցության ոլորտի, այդ թվում ընտանիքի, ընտանիքի սոցիալական գնահատման, ինչպես նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների, սոցիալական դեպքի վարման և ժողովրդագրության բնագավառների օրենսդրության վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

III. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառի իրավական կարգավորման ապահովում, մասնավորապես բնագավառը կարգավորող իրավական

ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակում, դրանց ներդրման կազմակերպում,

2) ինտեգրված սոցիալական ծառայությունների օրենսդրության միասնական կիրառումն ապահովելու նպատակով գերատեսչական նորմատիվ ակտերի և պաշտոնական պարզաբանումների մշակում, դրանք պետական գրանցման համար նախապատրաստում,

3) Ինտեգրված սոցիալական ծառայությունների միասնական տեղեկատվական համակարգի հիմնախնդիրների ուսումնասիրության (վերլուծության) աշխատանքների իրականացման կազմակերպում և ապահովում, այդ հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ առաջարկությունների մշակում,

4) Ազգային և տարածքային մակարդակներում սոցիալական համագործակցության համաձայնագրերով նախատեսված աշխատանքների կազմակերպում, համակարգող խորհուրդների աշխատանքների համակարգում, դրանց մեթոդական օգնության տրամադրում.

5) Տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքների համակարգում, մեթոդական օգնության տրամադրում, հաստատված, ինչպես նաև նախագիծ ծրագրերի հաշվառում,

6) սոցիալական աջակցության գրասենյակին մեթոդական օգնության տրամադրում,

7) ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական դեպքի վարման համակարգերի հիմնախնդիրների ուսումնասիրության (վերլուծության) աշխատանքների իրականացման կազմակերպում և ապահովում, այդ հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական դեպքի վարման համակարգերի կատարելագործման համապատասխան պետական ծրագրերի մշակում և այդ ծրագրերի իրականացման ապահովում,

8) ինտեգրված սոցիալական ծառայությունների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակում, առաջարկությունների ներկայացում և դրանց իրականացման համակարգում,

9) ինտեգրված սոցիալական ծառայությունների զարգացմանն ուղղված միջնաժամկետ ծախսերի ծրագրերին և Հայաստանի Հանրապետության բյուջեի հիմնական ցուցանիշներին վերաբերող առաջարկությունների մշակում,

10) ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրմամբ զբաղվող կազմակերպություններին և մարմիններին, ինտեգրված սոցիալական ծառայությունների գրասենյակին մեթոդական պարզաբանման տրամադրում,

11) մասնակցություն սոցիալական ծառայությունների նվազագույն որակական չափորոշիչների մշակման և անձին (ընտանիքին) տրամադրվող սոցիալական ծառայությունների որակը վերահսկելու հետադարձ կապի մեխանիզմների մշակման գործընթացին,

12) մասնակցություն ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառում իրականացվող քաղաքականության և պետական նպատակային ծրագրերի մոնիթորինգին,

13) ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրմամբ զբաղվող կազմակերպություններում և կառույցներում աշխատող մասնագետների, սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման բարձրացման նպատակով առաջարկությունների մշակում,

14) Նախարարության արտաքին կապերի վարչության հետ համատեղ ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառում գործունեություն ծավալող և բնագավառի հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն,

15) ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառում քաղաքացիների բանավոր և գրավոր դիմումների և բողոքների քննարկում, անհրաժեշտության դեպքում, դրանցում արծարծված խնդիրների ուսումնասիրում և համապատասխան պարզաբանումների տրամադրում,

16) Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ

միջոցներով ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառում վարվող քաղաքականության և ծրագրերի լուսաբանում,

17) մասնակցություն սոցիալական կարիքների գնահատման բնագավառի իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը, դրանց ներդրման կազմակերպմանը,

18) մասնակցություն սոցիալական կարիքների գնահատման բնագավառի իրավական կարգավորման ապահովմանը,

19) մասնակցություն սոցիալական կարիքների գնահատման բնագավառի հիմնահարցերի ուսումնասիրմանը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակմանը,

20) մասնակցություն ժողովրդագրության բնագավառի իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը, դրանց ներդրման կազմակերպմանը,

21) մասնակցություն ժողովրդագրության բնագավառի իրավական կարգավորման ապահովմանը,

22) մասնակցություն ժողովրդագրության բնագավառի հիմնահարցերի ուսումնասիրմանը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակմանը:

IV. ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Բաժինն իր առջև դրված խնդիրների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Ընտանիքի (ընտանեկան) քաղաքականության մշակում, ոլորտում առկա հիմնախնդիրների ուսումնասիրության (վերլուծության) աշխատանքների իրականացման կազմակերպում և ապահովում, այդ հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ առաջարկությունների մշակում,

2) Ընտանիքին սոցիալապես անապահով ճանաչելու չափորոշիչների, դրանց հիման վրա սոցիալական երաշխիքների գործող համակարգի ամբողջականացման

վերաբերյալ առաջարկությունների, համապատասխան պետական ծրագրերի մշակում և այդ ծրագրերի իրականացման ապահովում,

3) Սոցիալական գնահատման բնագավառի իրավական կարգավորման ապահովում, այդ թվում՝ բնագավառի կարգավորող իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակում, դրանց ներդրման կազմակերպում,

4) Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի հիմնախնդիրների ուսումնասիրության (վերլուծության) աշխատանքների իրականացման կազմակերպում և ապահովում, այդ հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ առաջարկությունների մշակում, ինչպես նաև ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի կատարելագործման համապատասխան պետական ծրագրերի մշակում և այդ ծրագրերի իրականացման ապահովում,

5) Սոցիալական գնահատման բնագավառի օրենսդրության միասնական կիրառումն ապահովելու նպատակով գերատեսչական նորմատիվ ակտերի և պաշտոնական պարզաբանումների մշակում, դրանք պետական գրանցման համար նախապատրաստում,

6) Սոցիալական գնահատման համակարգի կատարելագործմանն ուղղված ծրագրերի մշակում, առաջարկությունների ներկայացում և դրանց իրականացման համակարգում,

7) Սոցիալական գնահատման համակարգի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված միջնաժամկետ ծախսերի ծրագրերին և Հայաստանի Հանրապետության բյուջեի հիմնական ցուցանիշներին վերաբերող առաջարկությունների մշակում,

8) Տունայց կատարելու, անձի (ընտանիքի) սոցիալական կարիքները գնահատելու և սոցիալական դեպքը վարելու մեթոդաբանության (մեթոդական ցուցումների) մշակում և այդ մեթոդաբանության (մեթոդական ցուցումների) կիրառության ապահովում,

9) Ընտանիքի սոցիալական գնահատման հիման վրա տրվող սոցիալական ծառայությունների կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակում.

10) Սոցիալական գնահատմամբ զբաղվող կազմակերպություններին և մարմիններին, ինտեգրված սոցիալական ծառայությունների գրասենյակին մեթոդական պարզաբանման տրամադրում,

11) Մասնակցություն ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառում սոցիալական կարիքների գնահատման գործընթացի մոնիթորինգին,

12) Սոցիալական գնահատմամբ զբաղվող մասնագետների որակավորման բարձրացման նպատակով առաջարկությունների մշակում,

13) Նախարարության արտաքին կապերի վարչության հետ սոցիալական կարիքների գնահատման հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն,

14) Սոցիալական գնահատման համակարգի բնագավառում քաղաքացիների բանավոր և գրավոր դիմումների և բողոքների քննարկում, անհրաժեշտության դեպքում, դրանցում արծարծված խնդիրների ուսումնասիրում և համապատասխան պարզաբանումների տրամադրում,

15) Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով սոցիալական կարիքների գնահատման համակարգի և գործընթացի լուսաբանում,

16) Մասնակցություն ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառի իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը, դրանց ներդրման կազմակերպմանը,

17) Մասնակցություն ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառի իրավական կարգավորման ապահովմանը,

18) Մասնակցություն ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառի հիմնահարցերի ուսումնասիրմանը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակմանը,

19) Մասնակցություն ժողովրդագրության բնագավառի իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը, դրանց ներդրման կազմակերպմանը,

20) Մասնակցություն ժողովրդագրության բնագավառի իրավական կարգավորման ապահովմանը,

21) Մասնակցություն ժողովրդագրության բնագավառի հիմնահարցերի ուսումնասիրմանը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակմանը:

V. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Ժողովրդագրական ծրագրերի բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրական պետական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակում,

2) Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի հիմնախնդիրների վերլուծության և գնահատման աշխատանքների իրականացնում,

3) Ժողովրդագրության ակտիվ քաղաքականությանն ուղղված աշխատանքների վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների կազմում

4) Ժողովրդագրական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրերի, ժողովրդագրական հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ առաջարկությունների, ծնելիությունը և բազմազավակությունը խթանելու պետական ծրագրերի մշակում և այդ ծրագրերի իրականացման ապահովում

5) Ժողովրդագրական ակտիվ քաղաքականության բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրություն և ընդունելի մոդելների տեղայնացման ապահովում,

6) Ժողովրդագրական պետական քաղաքականության իրականացման նպատակով պետական մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում,

7) Ժողովրդագրական պետական քաղաքականության զարգացմանն ուղղված միջնաժամկետ ծախսերի ծրագրերին և Հայաստանի Հանրապետության բյուջեի հիմնական ցուցանիշներին վերաբերող առաջարկությունների մշակում,

8) Մասնակցություն ժողովրդագրական ծրագրերի և քաղաքականության իրականացման մոնիթորինգին,

9) Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով ժողովրդագրական ծրագրերի և քաղաքականության լուսաբանում,

10) Մասնակցություն ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառի իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը, դրանց ներդրման կազմակերպմանը,

11) Մասնակցություն ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառի իրավական կարգավորման ապահովմանը,

12) Մասնակցություն ինտեգրված սոցիալական ծառայությունների բնագավառի հիմնահարցերի ուսումնասիրմանը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակմանը,

13) Մասնակցություն սոցիալական կարիքների գնահատման բնագավառի իրավական ակտերի նախագծերի և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը, դրանց ներդրման կազմակերպմանը,

14) Մասնակցություն սոցիալական կարիքների գնահատման բնագավառի իրավական կարգավորման ապահովմանը,

15) Մասնակցություն սոցիալական կարիքների գնահատման բնագավառի հիմնահարցերի ուսումնասիրմանը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակմանը:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

12. Վարչության պետը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

13. Վարչության պետը՝

1) իրականացնում է Վարչության աշխատանքների համակարգումը, կազմակերպումը և անմիջական ղեկավարումը.

2) Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է Վարչության կողմից նախապատրաստված Նախարարի հրամանների, այլ իրավական ակտերի և փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակումը.

3) Նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ՝ Վարչության աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու և կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

4) Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է քաղաքացիների ընդունելությանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կատարում է քաղաքացիների ընդունելություն.

5) Նախարարին է ներկայացնում Վարչության տվյալ տարվա գործունեության ծրագիր-ժամանակացույցը՝ համաձայնեցնելով համակարգող տեղակալի հետ.

6) Նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագիրը.

7) իր լիազորությունների շրջանակներում այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

8) իր լիազորությունների շրջանակներում ապահովում է Վարչության և այլ մարմինների փոխհարաբերությունները.

9) սահմանված կարգով ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

10) Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

11) Նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, ըստ անհրաժեշտության, Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, աշխատանքային խմբեր կազմավորելու վերաբերյալ.

12) իր լիազորությունների շրջանակներում, համաձայնեցնելով Նախարարության գլխավոր քարտուղարի հետ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, աշխատողների, համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

13) Նախարարի, Նախարարի տեղակալների կամ Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին և խորհրդակցություններին.

14) իր լիազորությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, համապատասխան զեկուցումներ է ներկայացնում իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում.

15) իր լիազորությունների շրջանակներում տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ.

16) պատասխանատվություն է կրում Վարչության առջև դրված խնդիրների լուծման համար.

17) կատարում է Նախարարության կողմից վարվող քաղաքականության մասով՝ Նախարարի, Նախարարի տեղակալների, իսկ քաղաքացիական ծառայության

ղեկավարման և կազմակերպման մասով՝ Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարականները.

18) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

14. Վարչության աշխատողներն աշխատանքի ընդունվում և աշխատանքից ազատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Վարչության աշխատողներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև իրենց պաշտոնների անձնագրերով նախատեսված լիազորությունները, ապահովում են իրենց անմիջական ղեկավարների հանձնարարականների կատարումը և պատասխանատվություն կրում դրանք չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու համար: